

**ԲԵԿԹԱՇՆ ՈՒ ԱՆՈՒՇԸ/ Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի),  
Լոռու բարբառ (խոսվածք)**

Ժամանակով էլել ա, չի էլել մի թքավորի տղա:

Թքավորը որ ծերացել ա, տղին ասել ա.— Արի քի խրատնի տամ, ես մեծացել եմ, էսօր, էքուց  
մեռնելու եմ, ամեն քան քեզուզլիսու չի բռնես, մի չզիտենողի էլի հարցրու, քու գործդ հաջող  
կգա: Կնիկ առնելիս ըլիս՝ թքավորնու ախչիկ շառնես, առ մի քյասիքի ախչիկ. քյասիքի  
ախչիկը հարստութին չի տեհել, քեզ լավ կընդունի:

Հերը մեռավ, որ հորը չի լսեց, զնաց մի հարստի ախչիկ ուզեց. օխտն օր, օխտը քշեր հրսանիք  
արին իրան անոր տանը: Աները շատ հարուստ էր: Օխտը դաթ ոսկի բաժինք էրետ, տասը  
հատ դարավաշ տվուց իրան դուզլու անելու համար: Օխտը օրվա պաշար էլ տվուց՝ չորս  
ոչխար, էրկու փութ բրինձ, մի փութ քիշմիշ, մի կով՝ իրան դասաբը հետու, իրան խորակ  
շինողը հետը:

Էկավ հասավ իրան տուն, տանը թքավորի տղա Բեկթաշը նրա կնիկ Անուշը նորմեկանց  
օխտը օր հըրսանիք արին. հիսուն հատ ոչխար, քան փութ բրինձ, տասը փութ քիշմիշ,  
տասը հատկով, էրկու փութ սոխ, կես փութ սխտոր, քան թունզի զինի, տասը թունզի արադ  
Ղուկասի դուքանից բերին, քիշմիշը բերին Մահմադի դուքանիցը, սոխը բերին Հասանի  
դուքանիցը, կովերը բերին Վարդանի տավարիցը, ոչխարները բերին Մարկոսի ոխչարներիցը  
Ասին.— Նանի՝, շատ ենք տվել, թե՝ քիչ:

— Որդենի ջա՞ն, շատ լավ տվել եք, ձնձերի մինը ռավոտը՝ հացի կտանք՝ կուտենք, մնումն էլ  
մենք կրնենք,— ասեց մերը:

Պուճուր տղեն ասավ.— Նանի՝, եդ ատամնիդ, որ ըտե հանել եմ, պետք ա մազերդ էլ կենտ-  
կենտ հանեմ զլիից:

Սկսեցին հրսանիքը ճամփու դնել, օխտն օրվա ու քշերվա կերակուրը հետները դրին և իրանց  
ամեն ունեցածը: Խաբարը հասավ, թե հրսանիքը զալիս ա: Հարուստ հերը սկսեց դավու-  
զուռնեն ածիլ տալ: Գզիրը ամենքին էլ ձեն տվուց, մեձրեց, հարսանիքն էկավ դուռը: Ըսկսեցին  
օխտն օր, օխտը քշեր քեփ անել:

Հարուստ հերը ասել ա.— Իմ խնամին իր ունեցածը ախչկա հետ ա դրել, ես մի ուրիշ հանքի  
հըրսանիք պըտեմ անիլ:

Մորթեց հիսուն հատ կով:

Մենա տղեն ասավ.— Եղ ի՞նչ ես անում, այ հեր, կքյասիքանանք:

Ասավ թե.— Նրանց հերն անիծեմ, սովել պտին, զան մեր դռանը տենան, թող նրանց տնից  
բերածը չիմ մորթենք, մեր անմը բըրձրացնենք:

Հարիր հատ ոչխար մորթեց, մի ոսկու կոտ բրինձ, ընդիան բերել էր հարուստը, կես ոսկու կոտ  
քիշմիշ, մի քանի սոխ, կես խանի սխտոր: Մենա տղին կանչեց հերը, ասավ.— Տղա ջա՞ն, էս չիմ  
բերածիցը քեզ մի քան կա:

Նա հորը ասաց.— Չէ՛, այ հեր, չկա: Չիմ աներանց տնից բերածն ա:

— Թող մենք եդ զիտենանք, օչով չզիտենա: Բա զնացեք մեր Կարապետին հարցրեք՝ ըտի  
քա՞նի օր հրսանիք արին:

Կարապետն ասավ.— Տասնըշորս օր:

Էկան մորն ասին, թե.— Տասնըշորս օր:

Հերն ասեց.— Մենք կանենք քանըշորս օր:

Տղեն ասավ.— Ապի՝, մեր ունեցածից կզրկվինք:

— ԱՇ շաշ, նրա բերած տասը կոտ ոսկուց իրեքն եմ խարջել, ի՞նչ ես վախենում ա՛յ շաշ, ա՛յ շաշ:

Թե. — ԱՇ հեր, դու գիտես:

Քանըշորս օր սկսեցին օխտը քյարզահ զուռնա-դիոլով քեփ են անըմ, ամեն բարեկամներն էլ ըստի, լավ քեփի են: Օչով չի հրսկանում, խմողն ով ա, ուստողն ով ա: Հենց ընե խառնվել են:

Բեկթաշը միտքն արավ, որ.— Ես իմ հոր արած վասիաթը պըտի փորձեմ:

Գնաց բազարից մի ձեռք թուրքի շոր առավ. վասիախի երկենքն էր արշին ու կես, բաշլրի տուների երկենքն էր էրկու արշին, բաշլուղն էլ ինքը մի ջվալից մենձ էր:

Հարավ էդ շորերը, ձին դուս բերուց թամբեց, նորքարներուն թամբահ արուց, թե. — Առաջի զրիցս ես ա՝ որ Մաջկոն<sup>1</sup> կիաչի, վե կթողուք, եղի զրիցս էլ էն ա՝ որ ձեր տուն-տեղին լավ մտիկ կանեք: Ապրե՛ք, իմ նոքարներ, ապրեք: կզամ, կտենամ, որ դուք հալալ ծիծ կերած եք:

Ասեց, ձիուն նստեց, գնաց դրա հրսանիքը:

— Պույուր փաշա, աղբատ իւեր<sup>2</sup>:

Բեկթաշը տուն մտավ, գնաց թաքավորի կշտին նստեց: Մտիկ արավ, տեհավ, որ Անուշը որդի սիրուն տղա կա, նրանց ա մտիկ անում: Ամեքն էլ ուսում են, խմում, նա սիրուն տղերանց հետ ասում ա, խոսում:

Ասում ա. — Օղորմածիկ հերս որ ասեր՝ հարուստ մարդի ախչիկ մի ուզիր, հմի տեհա, որ ճշմարիտ ա ասել, բա իրեք ամսումը հարսը տղա կրերի: Վա յ, իմ օղորմածիկ հեր, որ քու զրիցը ես չեմ բռնել: Թե մեռա ոչ, այ կնիկ, քու գլուխը օյին կրերեմ: Դու հլա քու քեփի արա չվելը մթնիլը:

Մթնեց, Անուշի մորը գնաց ասավ.— Չիլի՛ լ, պառավ, մի բուռ ոսկի տամ՝ քշերս էդ հարսի ծոցը քնեմ:

Ասեց — Ո՞նց կըլի:

Ասեց. — Մի բուռ ոսկի էլ քի տամ:

Ասեց. — Դե, գնամ ախչկանս կուշտը, տենամ:

Գնաց ախչկանն ասեց.— Ախչի՛, արի ես քշեր էդ փաշի հետ քնի, մի բուռ ոսկի կտա:

— Նանի, ամոք ա, թուրք ա:

— Ախչի, ոսկին չի գիղի՝ թուրք ա՝, թե՝ հայ:

Ասավ. — Նանի՝, որ ասում ես, մի բուռ ոսկի դու վեկալ, մինը՝ ես:

Քշերը Անուշը գնաց էդ փաշի ծոցում քնելու: Էդ քշեր ծոցումը քնեց, ուավոտը Բեկթաշն բեխեն զողացավ ու գնաց: Տարավ բեխեն իրանց տուն, մի պառավի մի ծնած կով, մին էլ բեխեն էրետ, թե՝ պահե: Ինքը թուրքի շորերը հանեց, իրա շորերը հազավ, գնաց աներանց հրսանիքը:

— Բարի բիզուն ձեզ, այ աներտինք, բարի բիզուն ձեզ, ձեր հրսանիքը շնորհավոր ըլի, ձեր աչքը լուս, ձեր աչքը լուս:

Էկան նրան տարան ներս, նստացրին: Էդ ուավոտը տեհել էին, որ բեխեն կորել էր մի բեխի շափս սև քրթուկ պատանել ին, տերտերին զընացել ասել.— Մեր փեսի բեխեն մեռել ա, արի թաղի:

Տերտերն ասել էր.— Հերը որ ըստի չի, ես ո՞նց թաղեմ:

— ԱՌ, տերտեր, մի բուռը ոսկի, ոսկին կթաղի:

Տերտերը էկել, տարել, թաղել էր:

Հրսանիքը վերջացավ, Բեկթաշը զոնքաշին ասավ.— Դե՛, դեղի, մեզ ձամփու դի, բեխան բեր: Բա. — Բեկթաշ ջա՛ն, բեխեն մեռել ա:

<sup>1</sup> Շան անունը, Ծ. Կ.:

<sup>2</sup> Համեցեք աստծու բարին—Ծ. Կ.:

Բան չկա, մեռել ա՝ մեռել ա, իմ օղորմածիկ հերս ասել ա՝ «Որ քու թեխեն մեռնի, դի իմ կողքին, թաղի»: Գնանք հանենք, մեզ հետ տանենք, իմ հոր կշտին թաղենք:

Չոնքաշն ասավ.— Ես գիտեմ ոչ՝ որդի ա թաղած, տերտերը գիտի:

Գնացին, տերտերն ասավ.— Մի թե մի բուռ ոսկով թաղած թեխեն հանելու ա:

— Ահա՝ տերտեր, երկու բուռը ոսկի էլ, հանի՛:

Տերտերն ասավ.— Էդ մեռելն էն մեռելն ա, որ ոսկի շատ վեր կանի:

Հանեցին, Բեկթաշն ասեց.— Դեղի՛, մի բաց արա՝ տենանք:

Բաց արին, որ մի սև քոթուկի կտոր: Տերտերն ասավ.— Տեհա՞ր, որ ասեի, թե էդ մեռելը շատ ոսկի վեր կունի:

— Դեղի՛, ունչինչ չկա, — ասեց Բեկթաշը, եփ տեհավ, որ պառավոլ լաց ա ըլում, — մեր տեղն էլ ա էդ թափուր մեռելներ պտահում:

Բերին, որ ձամփու դնեն, պառավն ասավ ինքն իրան. «Սա իմ ախչկանը ձամփումը կփչացնի»: Երկու դոչաղ տոյի, երկու բուռ ոսկի տվուց, որ գնան ձամփումը փեսի գլուխր կտրեն, բերեն: Պառավի մտրի հետ Բեկթաշի Մաշկոն իմացավ, կլանչկլանչեց, խելոք նոքարը վեր թողուց, Մաշկոն ընդիանց ձամփա ընկավ:

Բեկթաշն ու Անուշն էլ ըստիանց ձամփա ընկան: Էկան մի խորը ձորումը, որ էդ դոչաղ տղերքը թաք կացած են: Մաշկոն էկավ հասավ Բեկթաշին: Բեկթաշը Անուշին ասավ.— Ինձ մի բան ըլլելու ա, Անուշ:

Անուշն ասավ.— Ես սադ՝ քեզ ոչինչ ըլիլ չի:

Էդ զրիցումն ին, թաք կացած տղեքը դուս էկան: Մինք բոնեց Բեկթաշին, տանում ա, Մաշկոն էլ եղնուց գնաց:

Բեկթաշին որ տարավ, ուզեց ըսպանի, Մաշկոն էդ տոյի էրախցը ըռխեց՝ թվանքը ձեռիցը ընկավ: Բեկթաշը թվանքը վեկալավ, ևս տղեն Մաշկոյի հոգուվն էր, թվանքով տվուց սրպանեց: Մաշկոն ընդիան վազեց, Անուշը կարծեց, թե Բեկթաշին սրպանեցին, ասեց.— Կոանդ մատադ, ամա սպանեց, հա : Էս Մաշկոն էլ մեզ մնաց, ինչ խելոք Մաշկոն էր:

Մին էլ տեհավ՝ Բեկթաշը էն թաքուն տեղիցը գձեց, էն մեկել տոյին էլ սրպանեց:

Գնաց ասեց.— Անուշ, Բարով տեհանք:

Անուշը հեշ չկարաց խոսալ:

— Ինչ լավ-լավ ֆորսեր արինք, Անուշ: Ով մինք կֆորսի, մենք երկուսը ֆորսացինք:

Գնացին հասան տուն, Բեկթաշն ասեց Անուշ, արի նստի տեղու:

Նոքարների մեկին թաքուն զրկեց պառավի կուշտը, պառավը էրեխեն բերուց:

— Անուշ, — ասավ,— ևս քու թեխեն ա, որ վեց ամիս ա էկել իր, իրեք ամսումը բերիր:

Անուշին կապեց դրան տակին, Մաշկոյին նստացրուց թախտին: Անուշի բաժինը Մաշկոյին ա տալի, Մաշկոյի բաժինը Անուշին ա տալի:

Իրան տուն էկած տնատերին ասրմ ա.— Դուք իմ տանը ինչ տենուք, չի հարցնեք:

Անուշը շատ սիրուն էր. իրան տուն էկած դոնաղներին մի նոքար ունի շեմքումը կաղնած, դուս ըլողն էլ ա մի թաս ջուր ածում Անուշի տակը, մտնողն էլ: Երկու դոնաղ էկան տուն, դոնաղնու մինք մնին ասավ.— Որ ինձ սրպանի էլ, ևս հարցնելու եմ Բեկթաշին, թե ինչի՞ ա Մաշկոն՝ թախտին, Անուշը դրան տակին կապած:

Ղոնաղն ասավ.— Բեկթաշ, ես քեզ մի զրից պտիմ ասիլ, ուզում ես ինձ սրպանի:

Ասավ.— Ասիլ մի, ես քեզ ասել եմ՝ ասիլ մի:

— Որ, — ասավ,— սրպանես էլ ասիլ պտես:

Նա հարցրուց, թե.— Էս ո՞նց ա էս սիրուն հարսը ըստի ա կապած, Մաշկոն թախտին ա:

Ղոնաղին մի լավ սիլլա տվուց՝ մի ատամը վեր ընկավ:

Տեհավ ըլիլ չի, դոնաղը շատ աղաչանք ա անում, նստեց իրա զլիսի էկածը մին-մին եդ մարդին նաղլ արավ: Էն էլ վեկացալ մի կում ջուր ածավ եդ Անուշի տակը: Բարին ըստի, չարը ընդի: